# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

# ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/85 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան**

**19 սեպտեմբերի 2025թ.**

2025թ. սեպտեմբերի 19-ին, ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի շենքում տեղի ունեցավ կենսահումուսի ձեռքբերման ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/85 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Ա. Մելիքյան՝ | «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի «Ագրոկենսատեխնոլոգիայի ԳԿ» մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատար, |
| Գ. Մելյան՝ | «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի «Ագրոկենսատեխնոլոգիայի ԳԿ» մասնաճյուղի Կենսատեխնոլոգիական մեթոդներով մշակաբույսերի բազմացման բաժնի վարիչ, |
| Տ. Ալոյան՝ | «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի «Ագրոկենսատեխնոլոգիայի ԳԿ» մասնաճյուղի ավագ գիտաշխատող: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Մելիքյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Ա. Սարգսյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Ընթացակարգը չկայացած հայտարարելու և անգործության ժամկետ սահմանելու մասին:

## 1. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Ա. Սարգսյանը Հանձնաժողովի անդամներին տեղեկացրեց, որ Ընթացակարգի շրջանակում 1-ին չափաբաժնի մասով հաղթող (ընտրված)

մասնակից ճանաչված «ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում՝ ոչ ուշ քան 12.09.2025թ ներառյալ, գրավոր չի ներկայացրել Պայմանագրի և որակավորման ապահովումները, և վերջիններս ներկայացնելու վերաբերյալ գրությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների համաձայն, Հանձնաժողովը որոշեց.

1. «ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

2. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Չ/Հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1-ին | «ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88» ՍՊԸ | անբավարար |

Հանձնաժողովը որոշեց.

1. «ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել համապատասխան գործընթաց՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով:

2. Ընթացակարգը 1-ին չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջները:

3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել Ընթացակարգի շրջանակում հրապարակվող հայտարարությունները հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Ա. Մելիքյան ________________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Գ. Մելյան ________________

Տ. Ալոյան ________________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Ա. Սարգսյան ________________